

Կ'ականարկէր Կովկասէն եկող կարճառօտ մարդուն: Հնդիկ տեսակը աքաղաղներուն կարճ էր, անխնամ, անցոյց: Միայն գիրքերու մուկերը չեն, որ փոխաբերութիւն կը հանեն շրջաբերութեան, եթէ կը ներուի սա բացատրութիւնը: Ռ. տը Կուռմոն կը հաւաստէ, որ Փարիզի Խալին մէջ ժողովուրդը մէկ օրուան ընթացքին կը յօրինէ այնքան փոխաբերութիւն, որքան չեն կրնար ընել Ֆրանսական գրականութեան բոլոր արհեստարանները տարուան մը ընթացքին: Աքլո՛ր: Հարկաւ: Այդ մարդոց ներքին նկատառումը գիտնական, տիրացու տիպարէն, յատկանշական էր սա խուլ քաջքշուկով, գրեկարդացող ցանցառ մարդերը պահող իրենց ընդհանրապէս ճիղճ մարմնէն ծորած պակասաւոր, քունի մը զգացողութեան մէջ: Փչես, կը դառնայ, թելադրող այդ մարմնեղէնին նիհարութիւնը: Աքլոր՝ թելադրող ոմանց յոխորտանքը, գզուլտուքի ախորժանքը, սնափառութիւնը: Այդ գեղացիներուն կարծիքով ամէն կարդացուոր աքլոր մըն էր ու ամէն օտար աքլորի մը դէմ պարտաւոր էր կռիւ յայտարարել, առանց կանխապատրաստութեան, ուղղակի յարձակումով, երբ դէմ դիմաց արձակուէին, իմացական գետնի վրայ. բարքերը ուրիշ չէին կրնար ըլլալ այդ գեղին մէջ ալ: Միայն փոխանակ լրագրի սիւնակի, անոնք ախոռը կամ փողոցը ունին իրենց տրամադրելի: Կռի՞ւր: Միտքի, ձեռքի, լեզուի գերագոյն վայելքն էր գեղացիին, մա՛նաւանդ՝ օտարներէ տեսարանուած: Ո՛րը՝ կը հնարէր հանելուկը, կը հրաւիրէր հանդիսականները զայն լուծելու եւ պարգեւ առնելու: Ո՛րը եղանակը կու տար երգին ու անոր մէջէն իրար բզկտելուն: Ո՛րը մէկն ալ սուտը կ'ածէր հաւերէն աւելի հեշտագին ու աղմկարար: Ամէն օտարական տաղանդով մը օժտուած է, անպատճառ, որուն տուրքը կը գանձէ, սանկ քանի մը ժամ վայելք ստեղծելով այդ զրկեալ գեղացիներուն: Այդ տաղանդը անոնց արտն է: Մարդը իր ցորենը լեզուով կը քաղէ, կը հնձէ, կ'աղայ ու կը ճաշակէ: Աշո՛ւղ: Որուն կալուածը մատն է, կոկորդը, երեւակայութիւնը, բոլորն